

**ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ**  
**ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**  
**ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ**  
**ԺԱՄԱՆԱԿԱԾՐՋԱՆՆԵՐՈՒՄ**  
(Միքայել Չամչեանի մեկնակերպի շուրջ)

Հայ նոր պատմագրութեան ռահվիրայ Միքայել Աբրահամի Չամչեանը (1738-1823) իր «Պատմութիւն Հայոց» մեծարժէք երկասիրութեան առաջին հատորում հայ եւ օտարաբան պատմադրիւրների հէնքի վրայ լուսաբանել է Հայաստանում քրիստոնէական կրօնի տարածման ընթացքում հայոց թագաւորների հետ առաքեալների, քարոզիչների փոխյարաբերութիւններին առընչուող խնդիրները: Մ. Չամչեանի շնորհիւ հայ նոր պատմագրութիւնն ապրեց իր արշալոյսը: Մ. Չամչեանը գրեթէ մեն-միայնակ իր ուսերին կրեց Հայոց ամբողջական գիտական պատմութիւն ստեղծելու առաքելութիւնը:

Մովսէս Խորենացու հետեւողութեամբ Մ. Չամչեանը Հայաստան քրիստոնէութեան մոլտքը շաղկապում է Օսրոյենէ պետութեան թագաւոր Աբգարի հետ, որին թէեւ համարում է Հայոց արքայ, բայց անպայման չեշտում է Միջագետքում նրա թագաւորելու փաստը: «Աբգար որդի Արշամայ,- գրում է Մ. Չամչեանը,- թագաւորեաց ի Մծբին, ի վերայ Հայոց»<sup>1</sup> եւ Մծբինից Եղեսիա տեղափոխեց «զամենայն արքունիս իւր... եւ զկուռան աւնուանեալսն Նաբոք, Բէլ...»<sup>2</sup>: Աբգարին ենթակայ է նաեւ բուն

<sup>1</sup> Տե՛ս ԶԱՄՁԵԱՆ Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Ա., Վենետիկ, 1784, էջ 276, 281:

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 284:

Հայաստանը, որտեղ նա «իշխանաց իշխան եւ հրամանատար»<sup>3</sup> է կարգում իր քեռորդի Սանատրուկին: Աւելին. նա միջամտում է նաեւ Պարսկաստանի ներքաղաքական կեանքին, այնտեղ թագաւորեցնելով Արտաշէսին<sup>4</sup>: Այնուհետեւ Աղձնեաց բղէխի եւ Ապահունիքի նախարարի միջոցով Աբգարը, որ եօթ տարի տառապում էր բորոտութեամբ, տեղեկանում է Քրիստոսի հրաշագործ բժշկութեան մասին եւ նամակով դիմում է նրան, խնդրելով բժշկել իրեն: Աբգարին բժշկելու համար Քրիստոսի 70 աշակերտներից թաղէոսը ուղարկւում է Եդեսիա: Ինչպէս յայտնի է, Քրիստոսն ունէր թաղէոս անունով երկու աշակերտ: Առաջինը նրա 12 առաքեալներից մէկն էր, որը քարոզչութիւն ծաւալեց նաեւ Հայաստանում: Միւսը նրա 72 աշակերտներից էր, որը յիշուում է ասորական գրականութեան մէջ Ադղա անունով: Ասորական հնագոյն մի երկում՝ «Ադղայի վարդապետութեան» մէջ նշւում է, որ այս Ադղա-Թաղէոսը Աբգար թագաւորի օրօք Օսրոյենէ պետութեան մէջ տարածել է քրիստոնէութիւն, դարձի բերելով նաեւ Աբգարին. նա ըստ նոյն աղբիւրի, վախճանուել է Եդեսիայում, մինչդեռ դրա հայերէն թարգմանութեան մէջ Ադղան («Ադղէն») Եդեսիայում քարոզելուց յետոյ մեկնում է արեւելեան միւս երկրներ՝ քարոզչութիւն ծաւալելու նպատակադրումով<sup>5</sup>: Այժմեան պատմագիտութիւնն ապացուցել է, որ Քրիստոսին ժամանակակից Եդեսիայի թագաւոր Աբգար Ե.ն չի ընդունել քրիստոնէութիւն: Թաղէոս առաքեալի կողմից Եդեսիայում ծաւալած քարոզչութեան մասին աւանդադրոյցը ստեղծուել է յետագայում, Եդեսիայի թագաւոր Աբգար Է.ի (165-167 թ.) օրօք<sup>6</sup>:

Մ. Չամչեանը գտնում է, որ Քրիստոսի մարդեղացման 33րդ տարում թաղէոս առաքեալն իրօք բժշկել, ապա նաեւ դարձի է բերել Աբգար արքային, որից յետոյ վերջինից վերցնելով Սանատրուկին ուղղուած հրովարտակ, ժամանել է Հայաստան՝ Շաւարշան (Արտազ գաւառ), եւ հէնց այնտեղ էլ մկրտել է նրան ու դստերը՝ Սանդուխտին, ինչպէս եւ նախարարների ու

3 Նոյն տեղում:

4 Նոյն տեղում, էջ 285:

5 Տէ՛ս ՂԵՐՈՒԲՆԱ ԵՒԵՍՍՍԻ, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց եւ քարոզութիւնի Ս. Թադէի առաքելոյ, Երուսաղէմ, 1868, էջ 46:

6 Տէ՛ս SEGAL J., Edesse "The blessed city", Oxford, 1970, p. 15.

չատ ուրիշներ<sup>7</sup>: Պատմաբանը յենում է անշուշտ, Թադէոսի վկայաբանութեան հայերէն տարբերակի վրայ<sup>8</sup>: Սակայն Եղեսիայից Հայաստան Թադէոսի ժամանելու մասին աւանդադրոյցը չի հաստատում վաւերական սկզբնաղբիւրներով: Այն հաւանաբար, Թադէոս առաքեալի վկայաբանութեան մէջ է մոծուել ասորական միջավայրում ստեղծուած գրական աւանդոյթի ազդեցութեամբ: Դիտելի է, որ այն արտացոլուած է նաեւ «Կանոնք առաքելական» գործում<sup>9</sup>, ինչն անշուշտ, հետեւանք է այն իրողութեան, որ Թադէոսի (նաեւ Բարդուղիմէոսի) վկայաբանութիւնն ունեցել է համաքրիստոնէական հէնք, որը վիպականացուել, գրական տեսք է ստացել Հայաստանում<sup>10</sup>:

Մ. Զամէանի կարծիքով Թադէոս առաքեալն Արտազում եպիսկոպոս է ձեռնադրել ոմն Զաքարիայի, ապա անցել է Հայաստանի հիւսիս-արեւելեան գաւառներ, որտեղ խոչընդոտների հանդիպելով, մեկնել է Աղուանք եւ քարոզչութիւն ծաւալել այնտեղ<sup>11</sup>: Այսպէս կոչուած Արտազի աթոռի Գաւազանագրքում տեղ գտած անվաւեր պատումի համաձայն, Արտազի եպիսկոպոսական աթոռը համարւում է առաքեալների կողմից հաստատուած<sup>12</sup>: Նկատենք, որ նշուած Գաւազանագրքի տուեալների հիման վրայ Մ. Օրմանեանը նոյնիսկ փորձել է վերականգնել Արտազի եպիսկոպոսների պատմութիւնն ընդհուպ մինչեւ Գ դար<sup>13</sup>, ինչն ի հարկէ, չի հաստատում վստահելի որեւէ սկզբնաղբիւրով: Հարկ է նշել նաեւ, որ նոյնիսկ Արտաշատի 449 թուականի եւ Դուինի 506, 554 թուականի ժողովներում Արտազում որեւէ եպիսկոպոս չի յիշուում: Յիշեալ Գաւազանագիրքը կազմուել է ԺԴ դ. Արտազում բնաւորուած միսիոներների դէմ մղուած բանակռիւների ժամանակ եւ նպատակ է ունեցել հիմնաւորել Արտազի եպիսկո-

7 ՉԱՄԶԵԱՆ Մ., Պատմութիւն Հայոց, Ա., էջ 291:

8 Հմմտ. Սոփերժ Հայկականք, Ը., Վենետիկ, 1853, էջ 13:

9 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Յակոբեանի, հտ. Ա., Երեւան, 1964, էջ 61-62:

10 Հմմտ. VAN ESBROECK M., La naissance du culte de S. Barthélémy en Arménie "Revue des Etudes Arméniennes" (REA), N. 17, 1983, p. 194-195.

11 ՉԱՄԶԵԱՆ Մ., Ա., էջ 291:

12 Տե՛ս «Արարատ» 1868, էջ 102-105:

13 ՕՐՄԱՆԵԱՆ Մ., Ազգապատում, Ա., Կ. Պօլիս, 1912, էջ 40-59:

պոսական աթոռի առաքելական ծագումը: Նրա կազմողները շահարկել են Արտագում թաղէոսի նահատակութեան մասին պահանջանք աւանդութիւնը, որն անշուշտ, գերծ չէ պատմական կորիզից: Ի հարկէ, Հայաստանում թաղէոսի ու Բարդուղիմէոսի ջանքերով սերմանուած քրիստոնէութիւնը կարողացաւ կազմակերպուել որպէս կրօնական համայնք եւ նոյնիսկ Գ ղ. կէսերին ունենալ իր եպիսկոպոսութիւնը, որը սակայն հնարաւոր չէ տեղորոշել Արտագում: Յայտնի փաստ է, որ Եւսեբիոս Կեսարացու վկայութեամբ Աղեքսանդրիայի հայրապետ Դիոննեսիոսը (248-265) նամակ է յղում հայերին, «որոց եպիսկոպոս էր Մերուժան»<sup>14</sup>: Վերջինիս անուան Արծրունի տոհմին պատկանելու փաստը հիմք չի տալիս նրան Արտագի եպիսկոպոս համարել, քանի որ Գ ղ. կէսերին Արտագը դեռեւս չէր ընդգրկած Արծրունիների իշխանապետութեան մէջ: Հնարաւոր է, որ Մերուժանը եպիսկոպոսութիւն էր անում բովանդակ Հայաստանի քրիստոնէական համայնքում: Չի բացառուում նրա Արծրունի ծագումը: Նոյն դարում մեծ Հայքն իբրեւ կազմակերպուած քրիստոնէական համայնք ունեցող երկիր, գրաւեց նաեւ ասորի քրիստոնէայ գիտնական Բարդաժան Եղեսացու ուշադրութիւնը, որը ժամանեց Դարանաղի գաւառ (Ա դարի քրիստոնէայ քարոզիչների ապաստանավայր) եւ Անի - Կամախում շարադրեց Հայոց պատմութիւնը<sup>15</sup>: Հաւանաբար, Հայաստանում վաղ քրիստոնէական կազմակերպուած համայնքը նկատի ունի Փաւստոս Բուզանդը, երբ յիշում է «Թաղէոսի վիճակը», «Թաղէոսի աթոռը»<sup>16</sup>:

Աղուանքում թաղէոսի եւ նրա աշակերտ Եղիշայի քարոզչութեան մասին Մ. Չամչեանի տեսակէտը խարսխւում է Մովսէս Կաղանկատուացու հաղորդած տեղեկութիւնների վրայ, որտեղ Եղիշայի քարոզչութիւնը Աղուանից կողմերում յարակցւում է Հա-

<sup>14</sup> Տե՛ս Եւսեբիոսի Կեսարացույ Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 517:

<sup>15</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, II, 42, էջ 201-202:

<sup>16</sup> Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, III, ԺԴ, էջ 35, IV, Գ, էջ 60, Դ, էջ 62 եւ այլն: Հայաստանում վաղ քրիստոնէութեան մասին ուշագրաւ աշխատութիւն ունի ԱՆԱՆԵԱՆ Պ., (տե՛ս նրա «Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր լուսաւորչի քարոզութեան առաջ», Վենետիկ 1979):



յաստանում նրա առաքելութեան հետ: Եղիշան, համաձայն Կաղանկատուացու, նախապէս քարոզել է Հայաստանում, որից յետոյ անցել է Աղուանք<sup>17</sup>:

Մովսէս Խորենացու վրայ յենուելով, Մ. Չամչեանը գրում է, որ Աբգար Թագաւորի վախճանութիւնը յետոյ Հայոց Թագաւորութիւնը մասնատուում է նրա որդու՝ Անանունի (Անանէ) եւ քեռորդի Սանատրուկի միջեւ, որոնցից առաջինը Թագաւորում է Եդեսիայում, երկրորդը՝ Շաւարշանում (Արտաշ)<sup>18</sup>: Սակայն Սանատրուկի Թագաւորութեան տարիներին քրիստոնէական կրօնը, Հայաստանում եղծւում է, եւ հայ նախարարներից նրանք, ովքեր Աբգարի երկիւղից դարձի էին եկել, վերստին ընկնում են կռապաշտութեան գիրկը, իրենց կողմը գրաւելով նաեւ Սանատրուկին<sup>19</sup>: Իսկ Թադէոս առաքեալը Աղուանքից վերադառնում է Հայաստան՝ քարոզելու նպատակով եւ լսելով Սանատրուկի արարքների մասին, մեկնում է Կեսարիա, ապա անցնում Միջագետք՝ Եդեսիա եւ վերստին քարոզչութիւն ծաւալում այնտեղ: Այստեղ նկատելի է անհամաժամանակութիւն, քանի որ Սանատրուկը Թագաւորել է աւելի ուշ՝ Ա-Բ դդ. սահմանագծին:

Միքայէլ Չամչեանի մեկնակերպը Ոսկեանց նահատակների մասին նոյնպէս իր վրայ կրում է անհամաժամանակութեան կնիք: Հայաստան վերադարձած Թադէոս առաքեալը հետը բերում է հինգ ազնուատոհմիկ հռոմայեցիների, որոնց առաջնորդ Խուխի (յունարէն՝ «ոսկի») անունով Թադէոսի կողմից մկրտուելուց յետոյ նրանք կոչւում են Ոսկեանք եւ քարոզչութիւն ծաւալում Հայաստանում՝ Թադէոսի հետ միասին: Բայց երբ Սանատրուկի ձեռքով նահատակւում են Թադէոսը, Սանդուխտ կոյսը եւ ուրիշ քրիստոնէաներ, Ոսկեանք մեկուսանալով Եփրատի ակունքների մօտ՝ Ծաղկանց լեռներում, տրւում են ճգնակեցիկ կեանքի:

17 Տե՛ս ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ. Առաքելեանի, Երեւան, 1983, I, 2, էջ 10-11: Հայկական Աղուանքում (Արցախ, Ուտիք) սուրբ Եղիշայի քարոզչութեան մասին տես ՍՎԱԶ-ԵԱՆ Հ. «Սուրբ Եղիշան Հայոց Արեւիկից կողմանց, Զոդա երկրի եւ Աղուանից աշխարհի լուսաւորիչ» («Լրաբեր Հայաստանի Գիտութ. Ակադեմիայի, 2000 թ., N2, էջ 55- 64):

18 Խորենացու մօտ՝ Հայաստանում (խոր. II, ԼԴ., էջ 157):

19 ՉԱՄՉԵԱՆ Մ., Ա, էջ 294:

Թադէոսի նահատակուելուց 43 տարի յետոյ, երբ Հայաստանում թագաւորող Արտաշէսը կնութեան էր բերել Սաթենիկին, Ոսկեանք ժամանում են Արտաշատ<sup>20</sup>: Այս անհամաժամանակութիւնը բխում է Մ. Չամչեանի կողմից Արտաշէսին Տրայիանոս կայսեր (98-117 թթ.) ժամանակակից համարելու փաստից: Նոյնը նկատուում է նաեւ Սանատրուկ թագաւորի պարագայում, որին պատմաբանը ժամանակակից է համարում Ներոն կայսեր<sup>21</sup>: Մ. Չամչեանի մօտ անհամաժամանակ է նաեւ Սուքիասեանց վկաների մասին պատումը: Վերջիններս այն 17 ալաններն էին, որոնք Հայաստան էին ժամանել Սաթենիկի հետ եւ Արտաշատում Ոսկեանց ազդեցութեամբ դարձել էին քրիստոնեայ, նրանց հետ մեկնել Եփրատի ակունքներ, մկրտուել այնտեղ, իսկ նրանց առաջնորդը կոչուել էր Սուքիաս: Սակայն Արտաշէսի որդի Արտաւազդ արքան սրի է քաշում Ոսկեանց, իսկ Սուքիասեանք կարողանում են փրկուել, հեռանալով Զրաբաշխ (Սուկաւետ) լեռներ: Արտաշէսի մահուանից յետոյ ալանների զօրապետը Սուքիասեանց տանում է ալանաց արքայի մօտ, որի հրամանով նրանք նահատակում են<sup>22</sup>: Դիտելի է, որ թէ այս, եւ թէ շատ այլ դէպքերում, Մ. Չամչեանն իր օգտագործած սկզբնաղբիւրներին անում է արժէքաւոր յաւելումներ, որոնք նրա պատումին հաղորդում են պատմաղբիւրի նշանակութիւն, քանի որ նրա վերահանած բազմաթիւ եղելութիւններ չեն արձանագրուած ո՛չ հայ եւ ո՛չ էլ օտար մատենագիրների երկերում:

Մ. Չամչեանը Հայոց առաքեալ է համարում նաեւ Բարդուղիմէոսին, որը պատմաբանի կարծիքով Հայաստան է ժամանում Թադէոսի սպանութիւնից յետոյ եւ նախապէս հաստատուում է Վասպուրականի Անձեւացիք գաւառում՝ Դարբնաց քար անունով վայրում, այնտեղ հիմնելով եկեղեցի եւ Հոգեաց վանքը, միաժամանակ քարոզելով նոր կրօնի լուսաւէտ գաղափարները հարաւային Հայաստանում, դարձի բերելով Սանատրուկի քրոջը (Թագուհի անուամբ), Հայոց հազարապետին եւ շատ ուրիշների: Սակայն Բարդուղիմէոսը եւս սպանում է Սանատրուկի հրամանով: Աղբակ գաւառի Արեբանոս քաղաքում է ամփոփւում նրա մար-

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 296-297, 343:

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 307-308:

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 344:

մինը, ապա տեղափոխւում է Նփրկերտ<sup>23</sup>: Բարդուղիմէոս առաքեալի մասին Մ. Զամչեանի պատումը խարսխուած է աւանդական հէնքի վրայ: Ե դարի պատմագիրը Սոկրատ Սքուաստիկոսի հաւաստմամբ, Բարդուղիմէոսը քարոզել է իրեն վիճակուած Հնդկաստանում եւ Հայաստանում<sup>24</sup>: Քրիստոնէութեան առաքեալներն այդպիսով քարոզչութեան ասպարէզ են համարել Հնդկաստանը, նաեւ նրանց միջեւ ընկած Պարթեւական իրանը: Հայ մատենագիրները նոյնպէս առաքեալների քարոզչութեան ոլորտներ են դիտում Արեւելքի երկրները (Ագաթանգեղոսը շեշտում է յատկապէս Մարաստանն ու Պարթեւաստանը)<sup>25</sup>: Նկատենք, որ Հնդկաստանում Բարդուղիմէոսի քարոզչութեան մասին յիշում են նաեւ Դ. Էկեղեցական մատենագիրներ Եւսեբիոս Կեսարացին եւ Եփրեմ Ասորին<sup>26</sup>: Իսկ Մովսէս Խորենացին նշում է, որ Հայաստանում քարոզող Բարդուղիմէոս առաքեալը նահատակուել է Արեւանոս քաղաքում<sup>27</sup>: Վերջինս նոյնական է Ուրբիանոսի հետ, որը վկայուած է նաեւ եւրոպական որոշ աղբիւրներում<sup>28</sup>:

Հարկ է նշել, որ Սանատրուկ թագաւորի հրամանով առաքեալների սպանութիւնը նոյնպէս ունի անհամաժամանակութեան դրոշմ, քանի որ Սանատրուկն ինչպէս նշուեց, ապրել եւ գործել է այդ առաքեալներից բաւականին ուշ ժամանակներում՝ Ա. դ. վերջին եւ Բ. դ. սկզբներին<sup>29</sup>: Ա. Գարագաշեանի կարծիքով Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալներին սպանել է Վրաց Փարս-

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 297-298:

<sup>24</sup> Sokrates Kirchengeschichte, herausgegen von G. Hansen, Berlin, 1995, s. 60-61.

<sup>25</sup> Տէ՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կառապետեանի, Տփղիս, 1909, էջ 355, 357, տե՛ս նաեւ Եղիշէի վասն վարդապետի եւ Հայոց պատերազմի, աշխ. Ե. Տէր-Մինասեանի, Երեւան, 1957, II, էջ 29:

<sup>26</sup> Տէ՛ս ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ, նշ. աշխ., էջ 364, Ս. Եփրեմի Մատենագրութիւնք, հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 259:

<sup>27</sup> ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, II, ԼԴ, էջ 158:

<sup>28</sup> MARQUART J., Untersuchungen zur Geschichte von Eran, II, Leipzig, 1906, s. 232-233.

<sup>29</sup> Տէ՛ս ՄԱՆԱՆԴԵԱՆ Հ., Երկեր, հտ. Բ, Երեւան, 1978, էջ 19, VAN ESBROECK M., *Le roi Sanatruk et l'apôtre Thadée* (REA), IX (1972), p. 242, VAN ESBROECK M., *La naissance du culte Saint Barthelemy en Arménie* (REA, 1983, p. 171-195).

ման թագաւորի եղբայր Միհրդատը, որը մ.թ. 30-ական թթ. թագաւորում էր Հայաստանում՝ Հռոմի կամքով<sup>30</sup>: Նկատենք նաեւ, որ Բարդուղիմէոսի լատիներէն վկայաբանութեան հեղինակը նրան նահատակուած է համարում ոչ թէ Հայաստանում, այլ Հնդկաստանում<sup>31</sup>, ինչն ի հարկէ, համոզիչ չէ, քանի որ Հնդկաստանում առաքելների քարոզչութիւնն աւելի վաղ է կատարուել, քան Հայաստանում: Մովսէս Խորենացուն վերագրուող «Պատասխանի թղթոյն Սահակայ» գործում նոյնպէս Բարդուղիմէոսը իրանում քարոզելուց յետոյ է անցել Հայաստան<sup>32</sup>: Բացի այդ, Բարդուղիմէոսի վկայաբանութեան մէջ վերջինիս քարոզչութեան ասպարէզ են համարում Հնդկաստանը, Իրանը, նոր ապա Հայաստանը, որտեղ եւ նա սպանւում է Սանատրուկի հրամանով<sup>33</sup>:

Մ. Չամչեանը գրեթէ անվերապահ մօտեցում ունի հայ մատենագիրների հաղորդումներին նաեւ Գրիգոր Լուսաւորչի հօր՝ Անակի մասին իր մեկնակերպը շարադրելիս: Նրա կարծիքով Անակը սերում է պարթեական իրանի ազատազնեայ տնից՝ «յազգէ Պահլաւունեաց, ի ցեղէ Սուրէնեան» իմա՝ նա պարթեւ Արշակունի արքայի տոհմակիցն է, որը յանձն է առնում ի կատար ածել Հայոց թագաւոր Խոսրովի սպանութիւնը, հրապուրուելով պարթեւ գահակալի խոստումներով: Դաւին անտեղեակ, Խոսրով թագաւորը պատուով հիւրընկալում ու փրկում է իբրեւ թէ պարթեւներից հետապնդուող Անակին, նրան օթեւանի տեղ տալով Արտազ գաւառի այն վայրում, ուր թաղուած էր Թադէոս առաքելը: Մովսէս Խորենացու հետեւողութեամբ<sup>34</sup> Մ. Չամչեանը կարծում է, որ Անակի կողակից Ոգուհին հէնց այդտեղ «յղացաւ զսուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր, պարգեւեալ ազգիս մերում միջնորդութեամբ սրբոյն Թադէոսի առաքելոյն»: Այնուհետեւ

30 Տէ՛ս ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ա., Բնական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1895, էջ 273:

31 MARQUART J., Untersuchungen, II, s. 232.

32 Մովսիսի Խորենացույ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 294-295:

33 Տէ՛ս Սոփերք Հայկականք, ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 6, 22, 29:

34 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, II, ՀԴ, էջ 211-212, տե՛ս նաեւ ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Պատմութիւն Տարօնոյ, աշխ., Ա. Արքաիմաւեանի, Երեւան, 1941, էջ 68:



Խոսարովը Անակին տեղափոխում է Վաղարշապատ, որտեղ 257 թ. ծնւում է Գրիգորը: Սակայն Անակն ու իր եղբայրը Խոսարով արքայի բարերարութեանը հատուցում են նրան սպանելով: Այս հայ զորականները Երասխ գետում հեղձամահ են անում արքայասպաններին, բնաջնջելով Անակի ողջ ազգատոհմը, բացի Գրիգորից, որին փախցնում են Կեսարիա եւ Սուրենից, որ տարւում է Պարթեւաստան: Կեսարիայում արքունահասակ Գրիգորին մի մեծատուն՝ Եւթաղը ամուսնացնում է ոմն Դաւթի դուստր Մարիամի հետ, որից ծնւում են Վրթանէսն ու Արիստակէսը<sup>35</sup>:

Այսպիսով հայ աւանդական պատմագրութեանը տուրք տալով՝ Մ. Զամչեանը կարծում է, որ Գրիգոր Լուսաւորիչը սերում է պարթեւ Արշակունիներից: Կրօնական ջերմեռանդութեամբ տոգորուած աւանդութեան նպատակն է ի զուգակշիռ Արշակունի Հայոց թագաւորների, Գրիգոր Լուսաւորիչի գլխին հիւսել թագազարմ առաքեալի լուսապսակը: Միաժամանակ հարկ է նշել, որ հայ պատմիչները (Ագաթանգեղոս, Մովսէս Խորենացի, Յովհան Մամիկոնեան եւ ուրիշներ) նշում են նաեւ Արեւմուտքից Հայաստան Գրիգորի ժամանման փաստը, այն աղբրակցելով նրա պարթեւական ծագման շուրջը հիւսուած զրոյցին, որը սակայն զուրկ է պատմական հիմքից<sup>36</sup>: Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» յունարէն իմբագրութեան մէջ եղած որոշ տուեալներ (որոնք աւելի նախնական են, քան հայերէն բնագրում եղածները) թոյլ են տալիս կարծելու, որ Գրիգոր Լուսաւորիչը սերում էր բուն Հայաստանի ազատագնեայ գերդաստանից: Այս մասին Տրդատ Մեծին հաղորդում է հէնց ինքը՝ Գրիգորը<sup>37</sup>: Այն փաստը, որ վերջինս ծառայում էր Տրդատ Մեծի արքունիքում, իսկ յետագայում ժողովրդի մէջ քարոզում էր քրիստոնէութիւն, գալիս է ապացուցելու, որ նա ծագումով հայ էր: Առանց հայերէնի իմացութեան նա չէր կարող նման գործունէութիւն ստանձնել: Պէտք

35 ԶԱՄՉԵԱՆ Մ., Ա, էջ 366-367:

36 Հմմտ. CHAUMONT M., *Sur l'origine de saint Grégoire d'Arménie* ("Le Museon". Revue d'Etudes Orientales, t. 102, fasc. 1-2, Louvain, 1989, p. 129-130).

37 ՏԵ՛Ա GARITTE G., *Documents pour l'étude du livre d'Agathange*, Vaticano, 1946, p. 23. Ն. Ադոնցի կարծիքով Գրիգորը սերում էր Փոքր Հայքի հռոմայեցի ազնուական գերդաստանից (տե՛ս N. Adontz, *Grégoire l'illuminateur et Anak le Parthe* (REA, VIII, 1928, p. 244-245).

է կարծել, որ Գրիգորը կրթութիւն ստանալով Կեսարիայում, վերադարձել էր հայրենիք եւ որպէս յունարէնի մէջ քաջագիտակ ու զարգացած անձնաւորութիւն, ծառայութեան էր ընդունուել Հայոց արքունիքում: Մ. Զամչեանը ենթադրում է, որ Գրիգորը Տրդատի հետ ծանօթացել է այն ժամանակ, երբ վերջինս այցելել էր Հռոմ, եւ Գրիգորը տեղեկանալով, որ իր հայրն է սպանել Տրդատի հօրը, կամեցել է ծառայել նրան «ի փոխարէն վնասու հօր իւրոյ»: Եւ երբ Տրդատը թագաւորեց Հայաստանում, նրա կողքին էր Գրիգորը, որը բոլորանուէր ծառայում էր արքային<sup>38</sup>: Այնուհետեւ պատմաբանը յենուելով Ագաթանգեղոսի վրայ, մէկ առ մէկ թուարկում է այն կտտանքները, որ կրեց Գրիգորը Տրդատի հրամանով: Սակայն դրանց մէջ միակը, որ հնարաւոր է իրական համարել, Գրիգորի բանտարկելութիւնն է Խոր Վիրապում, քանզի այն տեղայնացուած է եւ բխում է Գ. Դ. վերջին Հայաստանում խմորուած կացութիւնից: Յայտնի է, որ Տրդատ Գ.ը հօր գահին բազմեց Հռոմի զօրակցութեամբ, եւ Մծբինի 298 թ. հռոմէա-պարսկական 40ամեայ պայմանագրով Հռոմն իր հովանաւորութեան տակ առաւ Հայաստանն իբրեւ դաշնակից երկիր: Դիոկղետիանոս կայսրն, ինչպէս յայտնի է, հալածում էր քրիստոնեաներին: Տրդատ Գ.ի դաշնակցային պարտքն անշուշտ նրան պարտաւորեցնում էր հետեւել կայսեր քրիստոնէահալած ուղեգծին, խստաշունչ հրովարտակով արգելելով նոր կրօնը, չսրելով նաեւ յարաբերութիւնները հեթանոսական իրանի հետ<sup>39</sup>: Մծբինի պայմանագիրը ուղի էր հարթում նաեւ Հայաստանում նրա հօր հարեւանների քաղաքական եւ հոգեւոր ազդեցութեան ընդլայնման համար, սպառնալով երկրի անկախութեանը: Դրան կարելի էր դիմագրաւել միաստուածական կրօնով, հարեւանների կողմից մերժուող միաձիր գաղափարաբանութեամբ, որպիսին էր քրիստոնէական կրօնը: Այդպիսով հոգեւոր անկախութեամբ Տրդատ Մեծը ակնկալում էր քաղաքական անկախութեան: Այս մտայնութեան յետնախորքի վրայ թագաւորը հակուեց քրիստո-

38 ԶԱՄԶԵԱՆ Մ., Ա, էջ 370-373:

39 Ուշագրաւ է, որ իր հրովարտակում Տրդատը ակնկալում էր, որ «կայսրերի դաստակերտ» Հայաստանը հաղորդակցուելու է յոյների իմաստութեանը եւ հոգածութեան է արժանանալու «ի մեր դիցախառն Պարթեւաց» (տե՛ս Ա.ԳԱԹԱՆԳԵՂՈՍ, ԺԲ, էջ 73):



նէութեան կողմը եւ ազատ արձակեց կալանակեաց Գրիգորին՝ նոր կրօնը տարածելու նպատակադրումով: Մ. Չամչեանը հայ մատենագիրներին մօտ եղած աւանդութիւնների ոգով է շարադրում նաեւ Հռիփսիմեան կոյսերի նահատակութիւնը<sup>40</sup>: Անշուշտ, Հռիփսիմեանք իրական պատմական անձեր են, եւ նրանց շուրջը հիւսուած աւանդախառն պատմութիւններն ունեն վաւերական հէնք<sup>41</sup>: Դրանցում արտացոլուած են Տրդատ Մեծի օրօք Հայաստանում քրիստոնեաների դէմ կիրառուած հալածանքները: Մ. Չամչեանը հանգամանօրէն անդրադառնում է Հռիփսիմեանց կոյսերի պատմութեանը, անգամ Տրդատի խոզակերպ դառնալու եւ Գրիգորի հրաշագործ աղօթքների շնորհիւ նախկին տեսքը վերստանալու առասպելին:

Մ. Չամչեանը հակուած է այն կարծիքին, որ մինչեւ Գրիգոր Լուսաւորչի հանդէս գալը, Հայաստանում որոշ չափով տարածուած էր քրիստոնէութիւնը: Ի հարկէ, Հայաստանում այդ կրօնի տարածումն ամէնից առաջ պայմանաւորուած էր քաղաքական շարժառիթներով: Երկրի անկախութիւնը վտանգուած էր երկու զօրեղ հարեւանների յարաճուն քաղաքական եւ հոգեւոր ազդեցութեան պատճառով, որին տուեալ իրավիճակում կարող էր ի դերեւ հանել զօրեղ միաստուածական կրօնը՝ ժողովրդին միաւորելով նոր եւ հոգեւորոգ գաղափարներով ու խորախորհուրդ արժէքներով: Մինչեւ քրիստոնէութեան պետականացումը, Հայաստանում փաստօրէն առկայ էր երկձիւր հաւատք՝ պաշտօնականը՝ Հեթանոսութիւնը եւ հալածուող քրիստոնէութիւնը: Ստեղծուած կացութիւնն սպառնում էր պառակտել երկիրը ոչ միայն հոգեւորապէս, այլեւ քաղաքականապէս, խաթարելով նաեւ նրա միասնական իրաւակեցութիւնը: Միաստուածական կրօնն այդ պայմաններում ի զօրու կը լինէր ապահովել երկրի անկախութիւնը եւ ժողովրդին ձերբագրծել ուծացման վտանգից: Փաստօրէն Հայաստանում քրիստոնէութեանը վերապահուած էր քաղաքական կրօնի առաքելութիւնը, որով հնարաւոր դարձաւ ամրակայել Հայոց պետականութեան հինաւուրց հիմքերը: Ուստի

40 Չամչեան Մ., Ա, էջ 380-381, 385-386:

41 Հմտ. Ա.ԴՈՆՑ Ն., Պատմական ուսումնասիրութիւններ, Փարիզ 1948, էջ 275, ՄԱՀԷ ԺԱՆ-ՊԻԵՐԻ, Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութիւնը» եւ յուսմահոսմէական վէպը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1997, նո. 1, էջ 163:

նոր կրօնը վերածուեց ազգային-հայրենասիրական ոյժերի գաղափարական հզոր գէնքի:

Մ. Չամչեանը Հայոց զանգուածային դարձի պատմութիւնը շարադրելիս հիմնականում հետեւում է Ազաթանգեղոսին, կատարելով որոշ յաւելումներ: Այսպէս, նա ճիշտ կերպով նշում է, որ Տրդատն ու Գրիգորը զօրքի ուղեկցութեամբ շրջում էին երկրի բոլոր կողմերը եւ վերացնում հեթանոսական աստուածների արձանները («արձանս եւ պատկերս կոռց»)՝<sup>42</sup>: Իրօք, ինչպէս ցոյց են տուել ճարտարապետական հնագոյն մի քանի յուշարձանների ուսումնասիրողները, դարձի ժամանակ մեհնական կառոյցները ոչ թէ աւերուել, այլ վերածուել են քրիստոնէական պաշտամունքի կենտրոնների: Փոքր-ինչ յետոյ, Մ. Չամչեանը Ազաթանգեղոսի վկայութիւնների հետեւողութեամբ եւ հակասելով վերոնշեալ իր ճիշտ տեսակէտին, գրում է, որ Տրդատն ու Գրիգորն աւերել են հեթանոսական աստուածների մեհնաները<sup>43</sup>:

Մ. Չամչեանը կեսարիայում Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը դնում է 302 թ., որը նա համարում է Տրդատ Մեծի Գահակալութեան ժէ տարի<sup>44</sup>: Ըստ այդմ նա Տրդատի գահակալութեան սկիզբը դնում է 285 թուականին: Պատմաբան-գիտնականն անշուշտ, յենում է Մովսէս Խորենացու հաղորդման վրայ, որտեղ ասում է, որ Գրիգորը Ս. Թադէոսի աթոռին բազմել է Տրդատ Մեծի թագաւորութեան ժէ տարում<sup>45</sup>: Սակայն Խորենացին այլ առիթով նշում է, որ Տրդատ Մեծը գահակալել է Դիոկղետիանոսի կայսրութեան երրորդ տարում<sup>46</sup>, այսինքն 287 թ., քանի որ վերջինս կայսր է դարձել 284 թուականից: Նշելի է նաեւ Ազաթանգեղոսի մի վկայութիւնը, որտեղ նա հաւաստում է, որ Գրիգոր Լուսաւորիչը ձեռնադրուելուց յետոյ Հայաստան է բերել Աթանազիոնէս վկայի նշխարները<sup>47</sup>: Յայտնի է այս վկայի

42 Տե՛ս ՉԱՄՉԵԱՆ Մ., Ա, էջ 389:

43 Նոյն տեղում, էջ 390, 393:

44 Նոյն տեղում, էջ 391:

45 Տե՛ս ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, II, ՂԱ, էջ 242:

46 Տե՛ս նոյն տեղում, էջ 224:

47 ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, ՃԺԴ, էջ 422:



նահատակման ստորգ ժամանակը, այն է՝ 303 թ. յուլիս ամիսը<sup>48</sup>, ուստի Գրիգորը նրա նշխարները այդ թուականից շուտ չէր կարող բերել Հայաստան: Մ. Զամչեանի շարադրանքից հետևելով է, որ Հայոց առաջին եկեղեցիները Գրիգոր Լուսաւորիչը կառուցում է Տարօն գաւառում, ապա Բագրեւանդ գաւառի Բագաւան աւանում, որոնք յայտնի էին որպէս դիցապաշտական հաւատալիքների կենտրոններ: Ապա Գրիգորը Արածանի գետում մկրտում է Տրդատ արքային եւ 400 բիւր մարդկանց, որից յետոյ Տրդատ Մեծի հետ վերադառնում է Վաղարշապատ եւ նոր միայն հիմնում էջմիածնի եկեղեցին, կարգելով եկեղեցական տօները՝ «ըստ յունաց», բացում է նաեւ դպրոցներ՝ յունարէն եւ ասորերէն լեզուներով<sup>49</sup>:

Սակայն Ագաթանգեղոսի վկայութիւններից երեւում է, որ Գրիգոր Լուսաւորիչը Աշտիշատում եւ Բագաւանում եկեղեցիներ է հիմնել Ս. էջմիածին մայր վանքի շինութիւնից յետոյ, իսկ Տրդատի եւ 400 բիւր մարդկանց մկրտութիւնը կատարուել է յետագայում: Ընդ սմին Մ. Զամչեանը տարբեր անձեր է համարում Աղբիանոսին եւ Ալբոսին, առաջինին դիտելով որպէս Հարք գաւառի, երկրորդին՝ Արքունի դռան եպիսկոպոս: Սակայն այս երկու անունները նոյն անձն են, այն է՝ Աղբիանոսների քրմական տան նախնի Աղբիանոսը, որի սերունդները յետագայում դարձան կաթողիկոսներ: Ագաթանգեղոսի յունարէն եւ արաբերէն խմբագրութիւններում Աղբիանոսի անունը ունի Աղբի-նոս (Ալբինոս) ձեւը<sup>50</sup>: Աղբիանոսին Ագաթանգեղոսը սկզբնապէս յիշում է որպէս եպիսկոպոս «Կողմանցն Եփրատական գետոյն», Փաւստոս Բուզանդը՝ Մանազկերտի, իմա՝ Հարք գաւառի եպիսկոպոս<sup>51</sup>: Ագաթանգեղոսը յետագայում Աղբիանոսին համարում է Արքունի դռան, այսինքն Այրարատի եպիսկոպոս<sup>52</sup>: Անշուշտ, իրական չէ նաեւ Գրիգոր Լուսաւորիչի օրօք Հայաստանում 400 եպիսկոպոսների առկայութեան մասին կարծիքը: Հայաստանը եր-

48 ՏԷՍ ԱԻԳԵՐԵԱՆ Մ., Վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Ա, Վենետիկ, 1874, էջ 67:

49 ԶԱՄՉԵԱՆ Մ., Ա, էջ 396:

50 ՏԷՍ GARITTE G., Documents pour l'étude du livre d'Agathange, p. 102-103.

51 ԱԳԱԹԱՆԳԵԼՈՍ, ՃԻԱ, էջ 442, ՓԱԽՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, III, Դ, էջ 9:

52 ԱԳԱԹԱՆԳԵԼՈՍ, ՃԻԱ, էջ 442:



բեւիցէ՝ այդքան եպիսկոպոսներ չի ունեցել: Այլ առիթով Ագաթանգեղոսը նշում է, որ Գրիգորը ձեռնադրել է 12 եպիսկոպոսներ<sup>53</sup>:

Մ. Չամչեանը հակուած է նաեւ այն կարծիքին, որ Տրդատ Մեծն ու Գրիգոր Լուսաւորիչը մեկնել են Հռոմ եւ Կոստանդին կայսեր եւ Սեղբեստրոս պատրիարքի հետ կնքել են «դաշն սիրոյ եւ միաբանութեան», եւ իբր պատրիարքը Գրիգորին ձեռնադրել է Հայոց կաթողիկոս<sup>54</sup>: Այս մասին յիշում է Ագաթանգեղոսը: Բայց նրա երկում եղած այդ հատուածը յետագայի յաւելում է: Ա. Գարագաշեանի եւ Հ. Մանանդեանի կարծիքով այն պատմական վերյուշ է մ. թ. 66 թ. Տրդատ Ա.ի Հռոմ մեկնելու մասին<sup>55</sup>:

Մ. Չամչեանն իր դարի հարազատ զաւակն է, նրա պատմագիտական նուաճումների կարկառուն ներկայացուցիչը, որը կարողացաւ քննաբար ամբողջացնել Հայոց պատմութիւնը, Սերունդներին կտակելով նաեւ իր անխառն գիտական հաւատամքը, հայրենաշունչ ոգին, հայեցի պատմահայեցողութիւնը:

ՎՐԷԺ ՎԱՐԴԱՆԵԱՆ

<sup>53</sup> Նոյն տեղում, էջ 441-442:

<sup>54</sup> Տէս ԶԱՄԶԵԱՆ Մ., Ա, էջ 408:

<sup>55</sup> Տէս ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ա., նշ. աշխ., էջ 359-361: ՄԱՆԱՆԴԵԱՆ Թ., Երկեր, Բ., էջ 135: